նեայ եռանդուն ժողովուրդը ընդ այս Ազգասիրական ձեռնարկութիւն սիրելի Հոգևոր—Տեսչին իւրեանց՝ մեծ համակրութեամբ և բարի զգացմամբ ուրախանալով, կը փութան 5 յօդուածէ բաղկացեալ կանոնադրութեամբ մի ընկերութիւն կազմել, որոյ անդամք առայժմ հնգետասան անձինք են, և կը խնդրեն Օրիորդաց վարժարանի տնտեսական կառավարութիւնը ստանձնել ընկերութեան հոգացողութեան 'ի ներքոյ

Աւստի Գեր. Անդրէաս Արք Եպիսկոպոս՝ 55 համարաւ յայտարարութեամբն ներկայացնելով առ Վեհ. Կաթողիկոս՝ նոյն ընկերութեան խնդիրը և Կանոնադրութիւնը, Նորին Ս. Օծութիւնը բարեհաճեցաւ Օրհնութեան Կոնդակաւ հաստատել նոյն ընկերութիւնը և կանոնադրութիւնը՝ յորդորելով միանգամայն՝ կարելի ամեն ջանքը և հընարքը չը խնայել նոյն նորահաստատ վարժարանի Տնտեսական բարւոք կառավարութեան և յառաջադիմութեան ևս արդիւնաւէտութեան համար. որպէս զի յապագային կրթեալ և բարեզգաց օրիորդներ ստանալով նոյն վարժարանէն, ունենան նաև նոր սերունդին բարոյական երջանկութիւն և եռանդուն նպատակ հաղորդող մայրեր։

Առ այժմ նոյն վարժարանին մէջ կայ 40 աշակերտուհիք գտանուիլը և նոցա կրթութիւն ստանալը Գեր. Հոգևոր – Տեսչի յայտարարութենէն կիմանամք. և դաս տրուած առարկայքն են՝ Հայ. ընթերցանութիւն և Քրիստ. վարդապետութեան սկզբնական ուսանելիքը։

Այս առթիւ նաև կը յաւելումք հաղորդել, զի ըստ հրամանի Վեհ. Կաթողիկոսի՝ Նորին Գերապատուութիւնը իւր վիճակին Լաչինու գաւառակի Ղալակիայ և Գիրք գիւղօրէից մէջ ազգ. մանկտեաց դաստիարակութեան համար ժողովրդական հոգևոր դպրոցներ հաստատած է, և արդէն դասատուութիւնքը կը շարունակուին։

Սիրելի է մեզ այսու բարեպատեհ առթիւ մեր խորին շնորհակալութիւնքը յայտնելէն զկնի առ Գեր. Անդրէաս Արք Եպիսկոպոս՝ իւր ուսումնասէր և ազգասէր ջանից և գործունէութեան համար, բարեմաղթել՝ որ Նորին Գերապատուութիւնը իւր վիճակին ջերմեռանդն ժողովրդեան հետ գեղեցիկ և փոխադարձ համակրութեամբք և սիրով աջակցած՝ յաջողի ոչ միայն ժողովրդ. Հոգև. դպրոցներ հաստատել ամեն կողմև գիւղօրէից մէջ, այլ գլխաւորապէս արդէն հաստատեալները դարուս և Ազգիս ներկայ դրութեան կարօտութեան և անհրաժեշտ պահանջմանց համաձայն կարևոր և օգտաւէտ առարկաներով և բարեկարգութեամբք յարատև զարգացնել՝ ոտնակոխ անելով այն ամեն խոչընդոտները, որպիսի՛ք ամեն ժամանակ այսպիսի վսեմ ձեռնարկութեանց դէմ ընդ առաջ կըպատահին, սակայն խոհեմ և հեռատես ընթացքները կարեն զայնպիսիս խոնարհեցնել իւրեանց բաղձանաց առջև։

## ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՍՐԲՈՑ ԱԹՈՌՈՑՍ.

(Շարունակութիւն)

### Դիզակ գաւառէ

| | ռ. | կ. |
|---|---|---|
| Հասարակութիւն Հատրութ գեղջ . . | 100 | |
| Հատրութեցի Տիրացու Յարութիւն Տէր Յօհաննէսեան . . . . . | 8 | |
| Հասարակութիւն Վանք գեղջ . . . | 10 | |
| Հասարակութիւն Ջամձոր գեղջ . . | 20 | |
| Հասարակութիւն Շաղախ գեղջ . . | 14 | |
| Հասարակութիւն Ջիլան գեղջ . . . | 10 | |
| Հասարակութիւն Բնիաթտու գեղջ . . | 7 | |
| Հասարակութիւն Միլքատարեայ գեղջ . | 7 | |
| Առաքիլեցի Գիւլուշան Սէյրանեան . | 2 | |
| Առաքիլեցի Յովսէփ Պետրոսեան . . | 2 | |
| Առաքիլեցի Ղահրաման Ղազարեան . | 1 | |
| Առաքիլեցի Օհան Գրիգորեան . . . | 1 | |
| Հասարակութիւն (մնացեալ) Առաքել գեղջ | 15 | |
| Հասարակութիւն Բանազուր գեղջ . . | 50 | |
| Հասարակութիւն Քարագլուխ գեղջ . | 6 | |
| Հասարակութիւն Ձոր գեղջ . . . . | 25 | |
| Հասարակութիւն Դօլանլար գեղջ . . | 10 | |
| Հասարակութիւն Թաղասեռ գեղջ . . | 25 | |
| Հասարակութիւն Որդնաշատ գեղջ . . | 10 | |
| Հասարակութիւն Տաք գեղջ . . . . | 10 | |
| Հասարակութիւն Դուչչիլար գեղջ . . | 3 | |

| | ռ. | կ. |
|---|---|---|
| Հասարակութիւն Նորաշէնք գեղջ . . | 6 | |
| Հասարակութիւն Քոլբէկ գեղջ . . . | 5 | |
| Հասարակութիւն Մեյխբջանլու գեղջ . | 5 | |
| Դիզափայտու լուսարար Բաբայ Փարհատեան . . . . . . . . | 1 | |
| Հասարակութիւն Կամրակիւզ գեղջ . | 15 | |
| Հասարակուջիւն Առիլլու գեղջ . . . | 15 | |
| Հասարակութիւն Բլէրթանց գեղջ . . | 6 | |
| Հասարակութիւն Աղբուլաղ գեղջ . . | 6 | |
| Հասարակութիւն Ազիր գեղջ . . . | 7 | |
| Հասարակութիւն Մամստաձոր գեղջ . | 6 | |
| Հասարակութիւն Թաղոտ գեղջ . . . | 14 | |
| Հասարակութիւն Ձագուռի գեղջ . . | 7 | |
| Հասարակութիւն Հակակու գեղջ . . | 4 | |
| Հասարակութիւն Մուխրէնէս գեղջ . . | 6 | |
| Հասարակութիւն Ջրակուս գեղջ . . | 3 | |
| Հասարակութիւն Դրախտիկ գեղջ . . | 7 | |
| Հասարակութիւն Խանձաձոր գեղջ . . | 5 | |
| Թաղլարու Բէկզատայքն . . . . . | 5 | 30 |
| Հասարակութիւն Տումի գեղջ . . . | 10 | |

Վարանդայ գաւառ

| | ռ. | կ. |
|---|---|---|
| Հասարակութիւն Ն. Թաղավարդ գեղջ | 50 | |
| Հասարակութիւն Վ. Թաղավարդ գեղջ | 30 | |
| Հասարակութիւն Մոշխմհատ գեղջ . | 10 | |
| Հասարակութիւն Ղարաբուլաղ գեղջ . | 20 | |
| Հասարակութիւն Դոնավարդ գեղջ . | 40 | |
| Հասարակութիւն Խաչմաչ գեղջ . . | 14 | |
| Հասարակութիւն Ն. Սղնէք գեղջ . . | 20 | |
| Հասարակութիւն Վ. Սղնէք գեղջ . . | 15 | |
| Հասարակութիւն Սարգսաշէն գեղջ . . | 14 | |
| Հասարակութիւն Ղարաղի գեղջ . . | 8 | |
| Հասարակութիւն Սարուշէն գեղջ . . | 15 | |
| Հասարակութիւն Սխտորաշէն գեղջ . | 7 | |
| Հասարակութիւն Բլլակ գեղջ . . . | 3 | |
| Ծովատեղ գեղջ Բէկզատայքն . . . | 3 | |
| Հասարակութիւն Խիրխան գեղջ . . | 8 | |
| Հասարակութիւն Քիրթ գեղջ . . . | 18 | |
| Հասարակութիւն Քարահունջ գեղջ . . | 3 | |
| Հասարակութիւն Ղուզէյ-Ճարտար գեղջ | 35 | |
| Հասարակութիւն Խնուշինակ գեղջ . . | 30 | |
| Հասարակութիւն Կիւնէյ Ճարտար գեղջ | 50 | |

| | ռ. | կ. |
|---|---|---|
| Հասարակութիւն Գիշի գեղջ . . . | 49 | |
| Հասարակութիւն Հղորտի գեղջ . . . | 25 | |
| Հասարակութիւն Մօմնայ գեղջ . . . | 6 | |
| Հասարակութիւն Ննկի գեղջ . . . | 90 | |
| Հասարակութիւն Կղարծի գեղջ . . . | 80 | |
| Գրիգոր Աբրահամեան Ղազրովեան (ռուբ.) | 10 | |
| Հասարակութիւն Նորաշէն գեղջ . . | 60 | |
| Խաթուն Յօհաննէսեան (ռուբ.) . . . | — | 50 |
| Հասարակութիւն Սպիտակ-շէն գեղջ . | 20 | |
| Հասարակութիւն Աշան գեղջ . . . | 50 | |
| Հասարակութիւն Իմիշլան գեղջ . . | 16 | |
| Հասարակութիւն Հացի գեղջ . . . | 28 | |
| Յարութիւն Ղալեան (ռուբ.) . . . | 2 | |
| Հասարակութիւն Աւտուռ գեղջ . . . | 25 | |
| Հասարակութիւն Միրիշէն գեղջ . . | 15 | |
| Հասարակոնթիւն Փիրջամալ գեղջ . . | 90 | |
| Ալէքսան Ասրիեան Սարուխանեան (ռուբ.) | 5 | |
| Տիրացու Մելքոն Տ. Յարութիւնեան (ռուբ.) | 5 | |
| Հասարակութիւն Նախիջեւանիկ գեղջ . | 100 | |
| Նախիջեւանիկցի Բէկզատայքն . . . | 15 | |
| Հասարակութիւն Քեաթուկ գեղջ . . | 28 | |
| Հասարակութիւն Քռասնի գեղջ . . | 20 | |
| Հասարակութիւն Տարշուշէն գեղջ . . | 16 | |
| Հասարակութիւն Աղտարայ գեղջ . . | 8 | |
| Հասարակութիւն Մուշկապատ գեղջ . | 18 | |

(Շարունակելի)

---

Հետեւեալ գրութիւնը՝ որ 1869 թըւականի նոյեմբ. 25-ին գրուած եւ առ Մեծ. Մկրտիչ Սանասարեանց ուղղուած է՝ նորին ազգասէրութենէ նա եւ Վանայ Ազգային ուսումնարանին ընծայեալ 2 օրինակ Արարատներու համար՝ ամսագրոյս միջոցաւ փոխարէն երախտագիտական ըղգացմունքները պարզելու 'ի դիմաց ուսանող Հայ-մանկտւոյն նոյն ուսումնարանի, մեզ անծանօթ պատճառով՝ տակաւին նոր՝ այն է՝ 'ի 1-ն ամսոյս հասած լինելով խմբագրութեանս, կը փութամք հրատարակել ներկայ ամսագրոյս մէջ.